ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՅՏ

ՈՒՂԵՑՈՒՅՑ



ՀՀ քաղաքացիության շնորհման հայտ ներկայացնելու համար

Քայլերի հերթականություն

Քայլ 1 – Ծառայության տեսակի ընտրություն 3

Քայլ 2 – Հիմքի ընտրություն 3

Քայլ 3 – Դիմումատուի տվյալների նույնականացում 4

Քայլ 4 – Լուսանկար 5

Քայլ 6 – Ընդհանուր տվյալներ 5

Ընտրված հիմքի հիմնավորում

○ ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԵՄ 5

○ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎԵԼ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 7

○ Վերջին 2 տարվա ընթացքում գրանցված ամուսնության մեջ եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ 2 տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերով բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում 8

○ Ունեմ Հայաստանի Հանրապետության քաղաքացի զավակ կամ ծնող 8

○ 1995թ. հունվարի 1-ից հետո իմ դիմումի համաձայն հրաժարվել եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից 9

○ Ծնողներս (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում 9

○ ՀՀ-ում ունեմ փախստականի կարգավիճակ 10

○ Ես հանդիսանում եմ քաղաքացիություն չունեցող անձ 10

Ամփոփիչ քայլեր

Մերձավոր ազգականների տվյալներ 10

ԱՄՓՈՓՈՒՄ 11

Վճարում 12

Շտկում 13

Այցելություն և բնօրինակ փաստաթղթերի ներկայացում 13

Ձեր հայտը հաստատվելու դեպքում կստանաք ծանուցում՝ այցի օր ընտրելու վերաբերյալ: 13

ՀՀ սահմանադրության և հայոց լեզվի իմացության թեստ 13

Քայլ 1 – Ծառայության տեսակի ընտրություն



Առաջին քայլով ընտեք ծառայության տեսակը՝ Քաղաքացիության շնորհման հայտ և սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Քայլ 2 – Հիմքի ընտրություն

Այս քայլով անհրաժեշտ է ընտրել այն տարբերակը, որի համար հաջորդ քայլերով կներկայացնեք հիմնավորող փաստաթղթեր:

ՀՀ քաղաքացիություն շնորհման համար առկա են 8 հիմք՝

1. Ազգությամբ հայ եմ
2. Օրենքով սահմանված կարգով վերջին 3 տարին մշտապես բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում
3. Վերջին 2 տարվա ընթացքում գրանցված ամուսնության մեջ եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ 2 տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերով բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում
4. Ունեմ Հայաստանի Հանրապետության քաղաքացի զավակ կամ ծնող
5. 1995թ. հունվարի 1-ից հետո իմ դիմումի համաձայն հրաժարվել եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից
6. Ծնողներս (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում

Ընտրեք Ձեր համապատասխան տարբերակը և սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Հաջորդող քայլերում ցանկացած պահի կկարողանաք չեղարկել կամ պահպանել Ձեր առաջընթացը և հետագայում շարունակել գործընթացը:



ԿԱՐԵՎՈՐ Է

Հաջորդող քայլերում ցանկացած փաստաթուղթ ներկայացնելուց, եթե կցված փաստաթուղթը հայերեն չէ, ապա տվյալ փաստաթղթի հայերեն թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացվմամբ,

ՊԱՐՏԱԴԻՐ Է

Քայլ 3 – Դիմումատուի տվյալների նույնականացում

Եթե չունեք ՀԾՀ, ապա.

- կցեք Ձեր անձնագրի լուսապատճեն և փաստաթղթի թարգմանության ֆայլը,
- Կցեք Ձեր ծննդյան վկայականի լուսապատճեն, և եթե այն հայերեն չէ, ապա փաստաթղթի հայերեն թարգմանությունը, նշելով վկայականի համարը և տրման ամսաթիվը:



- Եթե ներկայացված փաստաթղթերում առկա է տվյալների անհամապատասխանություն կամ առկա է տվյալի փոփոխություն, ապա նշեք այս ընտրավանդակը և կցեք փոփոխությունը հավաստող փաստաթուղթը, իսկ եթե այն հայերեն չէ, ապա նաև փաստաթղթի հայերեն թարգմանությունը՝ նշելով վկայականի համարը և տրման ամսաթիվը:



- Եթե ունեք այլ երկրի քաղաքացիություն, ապա նշեք այս ընտրավանդակը և կցեք անձնագրի լուսապատճեն և հայերեն թարգմանությունը:



Քայլ 4 – Լուսանկար

Վերբեռնեք Ձեր՝ ուղեցույցին համապատասխանող լուսանկարը և սեղմեք «Հաջորդ» կոճակը:

Լուսանկարը պետք է լինի 3x4 , Գլուխը պետք է զբաղեցնի 70-80% լուսանկարի բարձրությունից: Անհրաժեշտ է հաշվի առնել դեմքի դիրքը և ուղղվածությունը, արտահայտությունը և աչքերը, չլինեն գլխարկներ և աքսեսուարներ:

Մանրամասն պահանջները ներկայացված են կայքի գլխավոր էջում տեղադրված Լուսանկարի ուղեցույցում:

Քայլ 6 – Ընդհանուր տվյալներ

Ստուգեք անձնական տվյալների համապատասխանությունը: Այստեղ կարող եք ավելացնել հավելյալ բնակության հասցե, հեռախոսահամար :

Այսքանով ավարտվում է անձնական տվյալների բաժինը: հաջորդ քայլերով կներկայացնեք ընտրված հիմքը հիմնավորող փաստաթղթերը:

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ՝ ԸՍՏ ՀԻՄՔԵՐԻ

○ ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԵՄ

Այս հիմքը ընտրելու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել Ձեր՝ ազգությամբ հայ ծնողների ամուսնության/ամուսնալուծության վկայականը, իսկ դրանց բացակայության դեպքում հայրության ճանաչման կամ միայնակ մայր հանդիսանալու վկայական կամ ազգությամբ հայ ծնողի հետ ազգակցական կապը հիմնավորող այլ՝ իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ:

*Եթե ներկայացված փաստաթուղթը հայերեն չէ, ապա կցեք նաև ներկայացվող փաստաթղթեի թարգմանությունը:

* Եթե Քայլ 4-ում կցած Ձեր ծննդյան վկայականում բացակայում է ծնողի/ների ազգությամբ հայ լինելու մասին նշումը, ապա ընտրեք ընտրվանդակը և հաջորդ քայլով կկարողանաք ընտրել հիմնավորման տարբերակները: Այս պարագայում Ձեր քայլերը կավելանան՝ կախված ընտրված հիմնավորման տարբերակից:

☑ Ծննդյան վկայականում բացակայում է ծնողի/ների ազգությամբ հայ լինելու մասին նշումը



Կախված ընտրված տարբերակից, ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

- **Մկրտության փաստաթուղթ**

  Հայ Առաքելական եկեղեցու կողմից տրված մկրտության վկայական, որտեղ նշված է Ձեր ազգությունը հայ (ծագումով հայ կամ այլ նշում ընդունելի չէ, պարտադիր է ԱԶԳՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ նշումը)
  Եթե փաստաթուղթը հայերեն չէ, ապա պետք է կցել նաև փաստաթղթի հաստատված հայերեն թարգմանությունը:

- **Հայրը / Մայրը ազգությամբ հայ են**

  Եթե Ձեր ծննդյան վկայականում բացակայում է ծնողների ազգությամբ հայ լինելու մասին նշումը, բայց Ձեր ծնողը/ները հայ են, ապա.
  - Կցեք Ծնողի ազգությունը հավաստող՝ իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ՝ տեղեկանք, ծնողի մկրտության վկայական՝ ծնողի ազգությամբ հայ լինելու մասին նշումով, և այլն.
  - Փաստաթղթի թարգմանությունը՝ հայերեն չլինելու դեպքում,
  - Եթե ծնողը ունի ՀԾՀ լրացրեք այն կամ կցեք ծնողի անձնագիրը,
  - և եթե ծնողի տվյալներում առկա է փոփոխություն, ապա անհրաժեշտ է ներկայացնել տվյալի փոփոխության փաստաթուղթը, և եթե այն հայերն չէ, ապա ևս կցել փաստաթղթի հայերեն թարգմանությունը:

  Ըստ ցանկության կարող եք ներկայացնել թե միայն մեկ թե երկու ծնողի փաստաթղթերն էլ:

- **Պապը / Տատը ազգությամբ հայ են**

  Եթե չեք կարող ներկայացնել ծնողների ազգությունը հավաստող փաստաթուղ, սակայն ձեր Տատը կամ Պապը ազությամբ հայ են, ապա.
  - Կցեք այն ծնողի ծննդյան վկայականը, ում մայրը կամ հայրը ազգությամբ հայ են, (հայերեն չլինելու դեպքում նաև փաստաթղթի

հայերեն թարգմանությունը) և լրացրեկ վկայականի համարը և տրման ամսաթիվը:

- Տատու և պապու ամուսնության/ամուսնալուծության վկայականը, իսկ դրանց բացակայության դեպքում հայրության ճանաչման կամ միայնակ մայր հանդիսանալու վկայական կամ Ձեր ծնողի ազգությամբ հայ ծնողի հետ ազգակցական կապը հիմնավորող այլ՝ իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ:
- Եթե Ձեր ծնողի ծննդյան վկայականում բացակայում է ծնողների (տատու/պապու) ազգությամբ հայ լինելու մասին նշումը, ապա կցեք տատու/պապու ազգությունը հավաստող՝ իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ՝ տեղեկանք, մկրտության վկայական՝ ազգությամբ հայ լինելու մասին նշումով, և այլն. (հայերեն չլինելու դեպքում նաև փաստաթղթի հայերեն թարգմանությունը)
- Եթե Ձեր տառը/պապը հանդիսանում են ՀՀ քաղաքացի, ապա կարող եք լրացնել ՀԾՀ կամ կցել անձնագիրը
- և եթե տատու/պապու տվյալներում առկա է փոփոխություն, ապա անհրաժեշտ է ներկայացնել տվյալի փոփոխության փաստաթուղթը, և եթե այն հայերն չէ, ապա ևս կցել փաստաթղթի հայերեն թարգմանությունը:

❖ Եղբայրը / քույրը ազգությամբ հայ են

Ձեր ազգությամբ հայ լինելը կարող եք նաև հիմնավորել, եթե Ձեր քույրը կամ եղբայրը ազգությամբ հայ են, ինչ համար պետք է.

- Կցել ազգությամբ հայ քրոջ կամ եղբոր ծննդյան վկայականի լուսապատճեն և, եթե տվյալ փաստաթուղթը հայերեն չէ, ապա նաև դրա հաստատված թարգմանությունը:
  Եթե ձեր ծնողները համատեղ չեն, ապա կցեք համահայր կամ համամայր եղբոր/քրոջ ծննդյան վկայականը, ում ազգությունը պայմանավորված է Ձեր համատեղ ծնողի ազգությամբ հայ լինելով
- և եթե եղբոր/քրոջ տվյալներում առկա է փոփոխություն, ապա անհրաժեշտ է ներկայացնել տվյալի փոփոխության փաստաթուղթը, և եթե այն հայերն չէ, ապա ևս կցել փաստաթղթի հայերեն թարգմանությունը:

❖ Ազգությամբ հայ լինելու մասին պաշտոնական փաստաթուղթ

Եթե Ձեր ազգությամբ հայ լինելը չեք կարող հինավորել վերևում թվարկված եղանակներից որևէ մեկով, ապա կարող եք ներկայացնել Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված ազգությամբ հայ լինելու մասին պաշտոնական փաստաթուղթ և այդ փաստաթղթի հաստատված հայերեն թարգմանությունը:

○ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՎԵՐՋԻՆ 3 ՏԱՐԻՆ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎԵԼ ԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Եթե վերջին 3 տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով մշտապես բնակվել եք Հայաստանի Հանրապետությունում և այդ ժամկետի համար ունեք կացության քարտ, ապա ՀԾՀ-ով կամ անձնագրով նույնականացվելուց հետո անհրաժեշտ տեղեկատվությունը կարտացոլվի «Ամփոփման» բաժնում:

Եթե ունեք ժամանակավոր կացության քարտ, ապա նախապես վստահ եղեք, որ կացության քարտերի միջև չկա բաց թողնված ժամանակահատված:

3 տարվա բնակության հանգամանքը Համակարգը ստուգում է ինքնաշխատ:

Տվյալի բացակայության դեպքում անհրաժեշտ է կցել վերջին երեք տարվա կացության քարտի լուսապատճեն, լրացնել համարը, տրման և վավերականության ամսաթվերը:

○ Վերջին 2 տարվա ընթացքում գրանցված ամուսնության մեջ եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ 2 տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերով բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում

Եթե առնվազն 2 տարի գրանցված ամուսնության մեջ եք ՀՀ քաղաքացու հետ և վերջին երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերով բնակվել եք Հայաստանի Հանրապետությունում, ապա անհրաժեշտը է ներկայացնել՝

- ✓ ՀՀ քաղաքացի հանդիսացող Ձեր ամուսնու անձնագրի լուսապատճեն կամ ՀԾՀ-ն
- ✓ Ձեր ամուսնության վկայականի լուսապատճեն, եթե նշված փաստաթուղթը հայերեն չէ, ապա նաև օրենքով սահմանված կարգով վավերացված՝ ապոստիլով հաստատված կամ հյուպատոսական վավերացմամբ փաստաթղթի հայերեն թարգմանությունը,
- ✓ Նշել վկայականի համարը և տրման ամսաթիվը
- ✓ Եթե առկա է ամուսնու տվյալի փոփոխություն, ապա նաև տվյալի փոփոխության փաստաթուղթը, և այն հայերեն չլինելու դեպքում նաև փաստաթղթի հաստատված հայերեն թարգմանությունը:

○ Ունեմ Հայաստանի Հանրապետության քաղաքացի զավակ կամ ծնող

➢ Եթե ընտրել եք ծնողների տարբերակը, անհրաժեշտ է ներկայացնել.

Ընտրել ո՞վ է հանդիսանում ՀՀ քաղաքացի *

Ընտրեք և հաջորդ քայլում կցեք համապատասխան փաստաթղթերը

ապա

- (●) Հայրը / Մայրը
- ( ) Որդի / դուստր

- Ծնողին նույնականացնել ՀԾՀ-ով կամ կցել Ծնողի անձնագրի լուսապատճեն,
- Ծնողների ամուսնության/ամուսնալուծության վկայականը, իսկ դրանց բացակայության դեպքում հայրության ճանաչման կամ միայնակ մայր հանդիսանալու վկայական կամ ՀՀ քաղաքացի

հանդիսացող ծնողի հետ ազգակցական կապը հիմնավորող այլ՝ իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ (եթե ներկայացված փաստաթուղթը հայերեն չէ, ապա նաև պետք է կցել փաստաթղթի թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ)
- Կցված փաստաթղթի համարը և տրման ամսաթիվը
- Եթե առկա է ծնողի տվյալի փոփոխություն, ապա նաև տվյալի փոփոխության փաստաթուղթը, և այն հայերեն չլինելու դեպքում նաև փաստաթղթի հաստատված հայերեն թարգմանությունը:

➢ Եթե ընտրել եք զավակների տարբերակը, ապա անհրաժեշտ է ներկայացնել.
- Զավակին նույնականացնել ՀԾՀ-ով կամ կցել անձնագրի լուսապատճեն,
- Զավակի ծննդյան վկայականի լուսապատճեն (եթե ներկայացված փաստաթուղթը հայերեն չէ, ապա նաև պետք է կցել փաստաթղթի թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ)
- Կցված փաստաթղթի համարը և տրման ամսաթիվը
- Եթե առկա է զավակի տվյալի փոփոխություն, ապա նաև տվյալի փոփոխության փաստաթուղթը, և այն հայերեն չլինելու դեպքում նաև փաստաթղթի հաստատված հայերեն թարգմանությունը:

○ 1995թ. հունվարի 1-ից հետո իմ դիմումի համաձայն հրաժարվել եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից

Եթե 01.01.1995թ.-ից հետո Ձեր դիմումի համաձայն հրաժարվել եք ՀՀ քաղաքացիությունից, ապա անձնագրով նույնականացվելուց հետո անհրաժեշտ տեղեկատվությունը կարտացոլվի «Ամփոփման» բաժնում:

○ Ծնողներս (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին բնակվել եմ Հայաստանի Հանրապետությունում

Եթե Ձեր ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն (կամ մահացած ծնողը եղել է ՀՀ քաղաքացի), և Դուք օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին բնակվել եք Հայաստանի Հանրապետությունում, ապա անհրաժեշտ է ներկայացնել.

✓ Ծնողի անձնագրի լուսապատճեն և փաստաթղթի հայերեն թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ, կամ ծնողին նույնականանել ՀԾՀ-ով:
✓ Եթե ծնողը մահացել է, ապա կարող եք ներկայացնել մահվան վկայականը (եթե ներկայացված փաստաթուղթը հայերեն չէ, ապա նաև պետք է կցել փաստաթղթի թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ), վկայականի համարը և տրման ամսաթիվը:
✓ Ծնողների ամուսնության/ամուսնալուծության վկայականը, իսկ դրանց բացակայության դեպքում հայրության ճանաչման կամ միայնակ մայր հանդիսանալու վկայական կամ նախկինում ՀՀ քաղաքացի հանդիսացած ծնողի հետ ազգակցական կապը հիմնավորող այլ՝ իրավասու մարմնի կողմից տրված պաշտոնական փաստաթուղթ (եթե ներկայացված փաստաթուղթը հայերեն չէ, ապա

նաև պետք է կցել փաստաթղթի թարգմանությունը՝ հաստատված ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ), վկայականի համարը և տրման ամսաթիվը:

- ✓ Եթե առկա է ծնողի տվյալի փոփոխություն, ապա նաև տվյալի փոփոխության փաստաթուղթը, և այն հայերեն չլինելու դեպքում նաև փաստաթղթի հաստատված հայերեն թարգմանությունը:

○ ՀՀ-ում ունեմ փախստականի կարգավիճակ

Եթե Հայաստանի Հանրապետությունում ունեք փախստականի կարգավիճակը, ապա ՀԾՀ-ով, անձնագրով կամ փախստականի կոնվենցիոն փաստաթղթով նույնականացվելուց հետո անհրաժեշտ տեղեկատվությունը կարտացոլվի «Ամփոփման» բաժնում:

○ Ես հանդիսանում եմ քաղաքացիություն չունեցող անձ

Եթե հանդիսանում եք քաղաքացիություն չունեցող անձ, ապա ՀԾՀ-ով կամ ՔՉԱ անձնագրով նույնականացվելուց հետո անհրաժեշտ տեղեկատվությունը կարտացոլվի «Ամփոփման» բաժնում:

Մերձավոր ազգականների տվյալներ

Ընտրված հիմքին համապատասխան տվյալները լրացնելուց հետո կարող եք անցնել Ձեր մերձավոր ազգականների տվյալները լրացնելուն:

Այս բաժնում, Ձեր ցանկությամբ, կարող եք ներկայացնել Ձեր մերձավոր ազգականների տվյալները:



ԱՄՓՈՓՈՒՄ

Այս բաժնում կարող եք տեսնել Ձեր բոլոր գործողությունները՝ ամփոփված, կարող եք համապատասխան բաժնից անցնել նախընտրած էջ և խմբագրել ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը:



Կարող եք ստուգել ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականությունը, և, Ձեր ցանկությամբ, ներկայացնել Ձեր մասին հավելյալ տեղեկատվություն: Նախապես համոզվեք, որ ներկայացված բոլոր օտարալեզու փաստաթղթերի հետ ներկայացրել եք դրանց օրենքով սահմանված կարգով վավերացված՝ ապոստիլով հաստատված կամ հյուպատոսական վավերացմամբ փաստաթղթի հայերեն թարգմանությունը:



«ՈՒղարկել հայտը» կոճակը սեղմելով ինքնաշխատ եղանակով կիրականացվի ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության ամբողջականության ստուգում: Եթե բոլոր պարտադիր դաշտերը լրացված չլինեն, համակարգը թույլ չի տա անցնել հաջորդ էջ, ինչպես նաև կհուշի որ էջում է անհրաժեշտ լրացնել բաց թողնված պարտադիր փաստաթղթերը:

Վճարում

Հայտ դիտարկման ներկայացնելու համար անհրաժեշտ է կատարել պետական տուրքի վճարում:

- Վճարումը կարող եք իրականացնել առցանց՝ **e-payments | Վճարել էլ. համակարգով**



Շտկում



Եթե հայտում բացակայում են անհրաժեշտ թարգմանությունները կամ ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում ընտրված հիմքին, ապա տեսուչը կարող է հայտը ուղարկել շտկման:

Դուք կստանաք ծանուցում և՛ էլեկտրոնային փոստով և՛ հարթակի միջոցով:

Անհրաժեշտ է սեղմել «Շտկել» կոճակը և բացված էջում կցել պահանջվող փաստաթղթերը:

Եթե 15 աշխատանքային օրվա ընթացքում չկատարեք շտկումը, հայտը կչեղարկվի:

Այցելություն և բնօրինակ փաստաթղթերի ներկայացում

Ձեր հայտը հաստատվելու դեպքում կստանաք ծանուցում՝ այցի օր ընտրելու վերաբերյալ:



Սեղմելով «Ընտել այցի օր» կոճակը, Դուք կկարողանաք ընտրել այցելության՝

- վայրը (ՄՔԾ գրասենյակ կամ հյուպատոսարան),
- օրը և ժամը:

Ընտրված օրը անհրաժեշտ է ներկայանալ բոլոր ներկայացված փաստաթղթերի բնօրինակներով և անձը հաստատող փաստաթղթով՝ նախընտրված ժամից 10 րոպե առաջ:

Եթե դուք ազգությամբ հայ չեք, ապա բնօրինակ փաստաթղթերը ընդունվելուց հետո տեղում պետք է անցնեք ՀՀ Սահմանադրության և Հայոց լեզվի իմացության թեստ:

ՀՀ սահմանադրության և հայոց լեզվի իմացության թեստ

Թեստը կազմված է 33 հարցից, յուրաքանչյուր հարց ունի երեք ենթադրյալ պատասխան, որոնցից միայն մեկն է միանշանակ ճիշտը:

Թեստի տևողությունը 1 ժամ է, անցողիկ շեմը՝ 50+% (առնվազն 17 ճիշտ պատասխան):

Ներկայացված փաստաթղթերը ընդունելուց հետո Տեսուչը Ձեզ կտրամադրի մեկանգամյա գաղտնաբառ: Ոեստը անցնելու համար գրասենյակի/հյուպատոսարանի համապատասխան համակարգչով անհրաժեշտ է մուտքագրել Ձեր գաղտնաբառը և սեղմել «Մուտք» կոճակը:



Թեստը չհաղթահարելու դեպքում Ձեզ կտրվի ևս 3 հնարավորություն՝ այցելելով մեկ այլ նշանակված օր: